ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 40 -Ա «11» 02 2021թ. ք.Երևան

ՍԵԴԱ ԱՐԱԻԿԻ ՏՈՆՈՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 22-3-25.1-Մ2-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետով և Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սեդա Արաիկի Տոնոյանին 2021 թվականի փետրվարի 11-ից նշանակել Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության իրավական ակտերի և մեթոդական ուղեցույցների մշակման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-3-25.1-Մ2-1) քաղաքացիական ծառայության պաշտոնում՝ ինը ամիս փորձաշրջանով:
2. Ամսական աշխատավարձը 212 309 (երկու հարյուր տասներկու հազար երեք հարյուր ինը) ՀՀ դրամ:
3. Սեդա Տոնոյանի համար սահմանված փորձաշրջանի համակարգող նշանակել Կոմիտեի պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի

մշակման վարչության իրավական ակտերի և մեթոդական ուղեցույցների մշակման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 22-3-25.1-Մ2-2) Լիդա Բիլբուլյանին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԵԼԱՆՅԱ ՂՈՒՇՉՅԱՆ